**Արձանագրություն N 5**
**Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ գովազդային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/12» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«25» «Հուլիս» 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Մ. Մխիթարյան |
| Հանձնաժողովի անդամներ | Լ. Բաբախանյան, Մ. Մնացականյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ.Սարգսյան |

***1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին***

---

***(Մ.Մխիթարյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 2-ի N 516-Ն որոշման 1-ին կետի 12-րդ և 13-րդ կետերը «Ափ Սոլուշնզ» ՍՊԸ-ին առաջարկվել էր 3 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 24.07.2019թ. ժամը 18:00 ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն «Ափ Սոլուշնզ» ՍՊԸ-ի կողմից մինչև շտկման համար սահմանված ժամը չեն ներկայացվել հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող թաստաթղթերը: Եվ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ «Ափ Սոլուշնզ» ՍՊԸ-ի հայտը մերժվում է և 1-ին չափաբաժնի մասով՝ կայացված բանակցություններից հետո 2-րդ տեղ զբաղեցրած «Անտարես» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ կետով պայմանավորված էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել 3 աշխատանքնային օրվա ընթացքում՝ մինչև 30.07.2019թ. ժամը 18:00-ն ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

***2. Հայաստանի Հանրապետության ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին***

---

***(Մ.Մխիթարյան)***

Համաձայն ՀՀ կառավարության 02.05.2019թ. թիվ 516-Ն որոշման 1-ին կետի 12-րդ կետի և հրավերի 7.18 և 7.19 կետերի «Ունիվերսալ Ինվեստ» ՍՊԸ-ին առաջարկվել էր շտկել անհամապատասխանությունը և վճարել ժամկետանց պարտավորությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 24.07.2019թ.) և վճարումը հավաստող

փաստաթղթի սկանավորված տարբերակը ուղարկել գնման ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին: «Ունիվերսալ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ ժամկետանց պարտավորությունը՝ 59,000 դրամ վճարվել է և վճարումը հավաստող փաստաթղթի սկանավորված տարբերակը 2019 թվականի հուլիսի 23-ին ուղարկվել է էլեկտրոնային փոստի միջոցով (կցվում է): Ուստի «Ունիվերսալ Ինվեստ» ՍՊԸ-ի ֆինանսական չափորոշիչները գնահատել բավարար:

### *3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հասփապելու մասին*

---

***(Մ.Մխիթարյան)***

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/12» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում հաջորդաբար տեղ զբաղեցրած «Անտարես» ՍՊԸ-ի կողմից պահանջվող որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերի ներկայացնելուց հետո:

Հանձնաժողովի

Նախագահ՝ --------------------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ --------------------- Լ.Բաբախանյան

--------------------- Մ. Մնացականյան

Քարտուղար՝ --------------------- Հ. Սարգսյան

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ «ԿԱՍԿԱԴ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«23» Հուլիսի 2019թ.

ԻՆԵԿՈԲԱՆԿ

Անդորրագիր 075 Առձեռն մուծում | 38

| | | | |
|---|---|---|---|
| Հիմնական պարտապան | ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԻՆՎԵՍՏ ՍՊԸ | Հաշվի Հ. | 205300000085-3691 |
| Ստացող | Գյումրի ՀՏ | Հաշվի Հ. | 900005001186 |
| Սոց. քարտ / Հվ.հհ | 05542503 | Գումարը | 59,000.00 |
| Վճարման նշանակու-թյունը | [ 21 - Գյումրի ] Դրոշմանիշային վճարի մարում ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԻՆՎԵՍՏ ՍՊԸ ՀՎՀՀ 05542503 | Միջ-վճար | 1,000.00 |
| | | Ընդամենը | 60,000.00 AMD |

Գումարը տառերով

Վաթսուն հազար Դրամ, 0 Լումա

Վճարող՝ Համբարձումյան Արտակ

Անձնագիր 093037006 ՀՇՀ

ստորագրությունը

Գանձապահ

Հաշվապահ

[ 85713559 ]

3/3